

րենտոլթու թիւամբ րաժականեր քանուեցան վասն օգոստոսիա Սուլթանին Սահմանադրութեան, երեսփոխանութեան Ս. Էջմիածնի վնհախառ Հայրապետին, Ս. Պատրիարքին և ընդհանուր Ազգիս:

Զմուռնաք նշանակել, թէ այդ սեղանը Պէրքօղի թաղական պատուարժան խորհուրդը պատրաստած էր հանգանակութեամբ 20 ի չափ անձանց:

Սեղանին շուրջը ուրիշ շրջանակի մը մէջ նրաւագարանք անդադար կնուագէին ազգային երգեր և պատուաւոր երիտասարդք մերթ ընդ մերթ պեղեցիկ պարեր կ'յօրինէին:

Վերջապէս զաշտավայրին ամեն կողմը հայկական վնհանձնութիւն, պարզութիւն և խնձիղք տիրած էին: Եւ ամենքս զարձնալ բերկրութեամբ զարձանք մեր տեղերը:

Փետր Թ. 998 Մայիս 28:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ Ի 6 ՅՈՒՆԻՍԻ.

Ուրբաթ օր (ի 6 Յունիսի) Ազգային Ժողովը գումարեցաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Աղանեան Վահմ. Ստեփան փաշայի:

Ժամը եօթնին ատենան բացուելով, նախորդ նիստի ատենագրութիւնը վաւերացուելէ վերջը, Մայր եկեղեցւոյ Պէտիկ փաշայի և Գումգափոռի Միացեալ Թաղերու 17 երեսփոխանաց ընտրութիւնները վաւերացուեցան:

Յետոյ իրաւասութեան զիւանին մէկ տեղեկագիրը կարգացուեցաւ որ Բաղ՝ Ժողովոյ հրաժարականը չընդունիլ կառավարիկէր և կը յաւելուր թէ՛ մէկ տարի ևս պաշտօն պէտք է վարէ:

Ատենապետ փաշան տեղեկագրին եզրակացութիւնը քուէի դնելով, Ժողովը միաձայն հաւանութեամբ որոշեց որ՝ Բաղ Ժողովը իւր սահմանադրական շրջանն աւարտած ըլլալու համար՝ մինչև 1876 մայիս 1՝ պէտք է շարունակէ իւր պաշտօնը:

Ամիջապէս այս իմաստով զիր մը խմբագրուեցաւ զիւանին կողմէն և Ս. Նախագահին յանձնուեցաւ:

Յետոյ Այլատեան Մատթէոս Էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարագրի խնդրոյն անցնելով՝ երբ թիւր ու դէմ խօսող երեսփոխանաց անունները արձանագրուելով վնհարանութիւնն սկսեալ վրայ էր. Ս. Նախագահին կողմանէ առաջարկութիւն եղաւ որ՝ այս և ասոր նման խնդիրներով չզբաղի Ժողովը, այլ Սահմանադրութեան վերաբնութեան և դատարարութեան խնդիրները ձեռք առնու. այս առաջարկութեան ձայնակցեցան քանի մը երեսփոխաններ և թէպէտ պահ մը Ժողովն ազմեցաւ, սակայն սոյն առաջարկութիւնը նորէն իրաւասութեան զիւանին խրկել որոշուելով ատենապետ փաշայի առաջարկութեամբ՝ աղմուկը վերջացաւ:

Ասկէ վերջոյ արժ. Գարեգին վարդապետի աղերսազրոյն վրայ յարարելութեան զիւանին բերած տեղեկագիրը կարգացուելով, տեղեկագրին եզրակացութեան համեմատ նոյն աղերսագիրը իբր անկատար խնդիր վարչութեան յղուեցաւ. նոյնպէս վարչութեան յղուեցաւ Մուրատեան վարժարանի խնդիրը ըստ առաջարկութեան կալուածոց և դատարարութեան միացեալ զիւանաց: Ժողովը աղա Մկրտիչ Սամուէլ Մուրատի յիշատակին շնորհակալութեան քուէ, նոյնպէս Թէոփորեան Գեր. Սարգիս վարդապետի այս մասին ունեցած աշխատութեանց համար զոհուակութեան քուէ տուաւ:

Կարգը Սահմանադրութեան վերաբնութեան խնդրոյն գաղով, Ռուսինեան Էֆէնտի կէս ժամու չափ խօսեցաւ, և ժամը 10ը անցած ըլլալով՝ ատենանը գոցուեցաւ յաջորդ նիստը 15 օրէն ընկու որոշմամբ:

Դալ անգամաւորին խնդիր պիտի ըլլայ Սահմանադրութեան վերաբնութեան վնհարանութիւնը:

Սոյն նիստին մէջ եթէ անարդար և ցաւալի բան մը կար, այն ալ աջակողմեան երեսփոխանաց ոմանց բռնած դիրքն էր, որոնք երբեմն քննութիւն և դատաստան կը պոռային, իսկ նոյն օրը Ս. Նախագահին առաջարկութեանը համակերպելով ապացուցին թէ՛ օրինաւոր դատաստանէ ու քննութենէ խոյս տալ կուզեն:

Հայրենիք Թ. 254, Յունիս 40: